Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 11-ի N 53-Ն որոշման

Ց Ա Ն Կ

# ԸՍՏ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| NN ը/կ | Պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները | Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները տնօրինելու լիազորություններով օժտված մարմինները |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | |
| 1. | Զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհազորի և տարածքային պաշտպանության վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |
| 2. | Պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ անվտանգության խորհուրդ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| 3. | Հայաստանի Հանրապետության տարածքի օպերատիվ սարքավորման (կահավորման), գործողությունների նախապատրաստման և վարման վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 4. | Զորքերի ծավալման (այդ թվում՝ զորահավաքային), նրանց մարտունակության, մարտական հերթապահության կրման ձևերի ու եղանակների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 5. | Զինված ուժերի և այլ զորքերի ղեկավարման համակարգի փոխդասավորության, գործունեության հաջորդականության, համակարգի հասանելիության, ամբողջականության, համակողմանի ապահովման վերաբերյալ տեղեկությունը և գաղտնիության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |

| | | |
|---|---|---|
| 6. | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորահավաքի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռեսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնարավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական, ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրումներով ապահովելուն վերաբերող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>Քաղաքացիական պաշտպանության հանրապետական ծառայություններ<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |
| 7. | Ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց անվանումների, բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 8. | Սպառազինության և ռազմական տեխնիկան մշակելու, կառույցների, տեխնոլոգիայի, պատրաստման, գտնվելու վայրը, կիրառման կամ շահագործման ուղղությունները բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 9. | Զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, սպառազինությունը, ապահովման և մարտունակության վիճակը, անձնակազմի, տրանսպորտային միջոցների, տեխնիկական այլ միջոցների, նյութական միջոցների (վառելիքաքսուկային և այլ միջոցներ) թվաքանակը բացահայտող տեղեկությունները, բացառությամբ, երբ նշված տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր<br>Քաղաքացիական պաշտպանության հանրապետական ծառայություններ |

| | | |
|---|---|---|
| | ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն | |
| 10. | Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ապահովմանն ուղղված հեռահաղորդակցության համակարգին և ցանցերին վերաբերող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 11. | Զինված ուժերը, այլ զորքերը և քաղաքացիական պաշտպանության ուժերը բոլոր տեսակի կապերով (ռադիոլոկացիոն, ռադիոտեխնիկական) ապահովման կազմակերպումը կամ գործելը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 12. | Հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ կադաստրի կոմիտե<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն<br>Կառավարման պահեստային կետեր ունեցող պետական մարմիններ |
| 13. | Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 14. | Ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության աստիճանի մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |

| | | |
|---|---|---|
| 15. | ՀՀ կառավարության հաստատած ցանկով զինված ուժերի կարիքների համար իրականացված գնումների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>Պետական կառավարման համակարգի մարմիններ՝ համակարգվող ոլորտի մասով |
| 16. | ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի գործունեության կազմակերպման և իրականացման հիմնական ձևերն ու մեթոդները, պետական սահմանի պահպանության կառուցվածքը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| | 2. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |
| 17. | Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական (առևտրային, վարկային և արժութային) գործունեության մասին տեղեկությունները, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ անվտանգության խորհուրդ |
| 18. | Ռազմական, գիտատեխնիկական և այլ բնույթի համագործակցության մասին տեղեկությունները, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն |
| 19. | Ռազմական դրության ժամանակ օտարերկրյա պետությունների հետ համագործակցության ուղղությունները կամ տնտեսական ծավալը, ինչպես նաև այդ հարցերով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ռազմագործահավաքային փոխներգործությունը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| | 3. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |
| 20. | Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն |

| | | |
|---|---|---|
| | վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի, նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի, փաստացի չափի և դրանց տեղաբաշխման մասին տեղեկությունները | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ վիճակագրական կոմիտե<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր |
| 21. | Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով ենթակառուցվածքների օգտագործման մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 22. | Պետական պաշտպանական պատվերների ծավալների, ծրագրերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման, մատակարարումների, դրանց արտադրական կարողությունների առկայության և զարգացման մասին, այդ նպատակով կազմակերպությունների միջև ստեղծված փոխհամագործակցության կապերի, նշված սպառազինությունները և ռազմական տեխնիկա արտադրողների կամ տեխնիկական և գիտական մշակումներ կատարողների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |

| | | |
|---|---|---|
| 23. | Պաշտպանական կամ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 24. | Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի, տարահանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |
| 25. | Քաղաքացիական պաշտպանության պլանների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>Պետական կառավարման համակարգի մարմիններ<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |
| 26. | Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>Զորահավաքային առաջադրանք ունեցող |

| | | |
|---|---|---|
| | | կազմակերպությունների՝ զորահավաքային առաջադրանքների կատարումը համակարգող պետական կառավարման համակարգի մարմիններ<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր |
| 27. | Տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>Պետական կառավարման համակարգի մարմիններ<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |
| 28. | Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով անցկացվող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 29. | Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով իրականացվող հիդրոօդերևութաբանության և երկրաֆիզիկայի բնագավառում աշխատանքների, ինչպես նաև հատուկ երկրաբանաերկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքները բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| 30. | Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն<br>Զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների՝ զորահավաքային առաջադրանքների կատարումը համակարգող պետական կառավարման համակարգի մարմիններ<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր<br>ՀՀ համայնքապետարանների աշխատակազմեր |

| | | |
|---|---|---|
| 31. | Ռազմական փոխադրումների ծավալները և սպառազինության ու ռազմական տեխնիկայի փոխադրման երթուղիները, տրանսպորտային միջոցների վիճակը, սարքավորումները, ռազմական նպատակի համար տրանսպորտային ցանցերի նախապատրաստումը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն |
| 32. | Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը, այդ թվում՝ տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ մարզպետների աշխատակազմեր |
| 33. | Ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական օբյեկտների տեխնիկական, ինչպես նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի խմելու և կենցաղային ջրամատակարարման համար օգտագործվող ջրաղբյուրների (հորատանցք, բնաղբյուր) տեղադիրքի և այլ բացահայտումների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կադաստրի կոմիտե (իրավունքի պետական գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ արտացոլվելու դեպքում) |
| 34. | Միջուկային տեղակայանքների, միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության նախագծային սպառնալիքը, ֆիզիկական պաշտպանության ինժեներատեխնիկական կառույցների շահագործման կարգը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե |
| 35. | Միջուկային նյութերի և 1-ին ու 2-րդ դասի ռադիոակտիվ նյութերի ներմուծման, արտահանման, փոխադրման միջոցները, օրը և ժամը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման |

| | | |
|---|---|---|
| | | կոմիտե<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե |
| 36. | Հայաստանի Հանրապետության պաշտպա-նունակության և անվտանգության ապահով-ման նպատակով տիեզերական տեխնոլոգիա-ների և ենթակառուցվածքների կիրառման և զարգացման հեռանկարների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| 37. | ՀՀ կենտրոնական բանկի դրամական պահուստների վերաբերյալ տեղեկություն-ները՝ յուրաքանչյուր անվանական արժեքի համար, հայկական դրամի պատրաստման տեխնոլոգիայի և պաշտպանության առանձ-նակի հատկանիշների, ՀՀ կենտրոնական բանկի գործունեության անընդհատության ապահովման և անվտանգության համա-կարգերի վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ կենտրոնական բանկ |
| | 4. ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |
| 38. | Հետախուզական, արտաքին հետախուզա-կան, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլան-ների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե |
| 39. | Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախու-զական գործունեություն իրականացնող մար-մինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե |
| 40. | Օպերատիվ-հետախուզական միջոցառում-ների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետերի գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե |
| 41. | Հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե |
| 42. | Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց պաշտպանության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 43. | Կառավարական և այլ տեսակի հատուկ կապի համակարգի, ծածկագրերի մշակման, դրանց պատրաստման և ապահովման, ծածկագրային և հատուկ պաշտպանության միջոցների վերլուծության մեթոդների, հատուկ նշանակության տեղեկատվական վերլուծական համակարգերի, հատուկ նշանակության համակարգչային ցանցերի և տեղեկատվական ենթակառուցվածքների սխեմաների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի հարձակումներից պաշտպանության մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն |
| 44. | Պետական գաղտնիքի պահպանման և պաշտպանության կազմակերպման և դրա փաստացի վիճակի մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 45. | Ահաբեկչության հակազդման և որոշակի անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցներ կիրառելու մեթոդների, եղանակների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |

| | | |
|---|---|---|
| 46. | Ահաբեկչության հետ հնարավոր առնչություն ունեցող անձանց և կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական մոնիտորինգի արդյունքների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| 47. | Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանության մեթոդների ու միջոցների մասին տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| 48. | Պետական պահպանության ենթակա կառույցների անվտանգության ապահովման ուժերի, միջոցների, մեթոդների, ինչպես նաև դրանց գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք կարող են բացահայտել թվարկված տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն |
| 49. | Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանության և պաշտպանության առկա (փաստացի) վիճակը բացահայտող տեղեկությունները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| 50. | Կադրերի պատրաստման մասին տվյալները, եթե դրանք կարող են բացահայտել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները | ՀՀ վարչապետի աշխատակազմ<br>ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական պահպանության ծառայություն<br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ